# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

**Չարենցավանի համայնքապետարանը** ստորև ներկայացնում է իր կարիքների համար **տնտեսական ապրանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ՉՀ-ՄԱԱՊՁԲ-2021/1»** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2020 թվականի դեկտեմբերի 23-ին** կնքված N **«ՉՀ-ՄԱԱՊՁԲ-2021/1»** պայմանագրում **2021 թվականի հունվարի 08-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ ապրանքների մատակարարումն իրականացվելու է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու և կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքվելու դեպքում:

Փոփոխության նկարագրություն: Ապրանքների մատակարարումն իրականացվելու նպատակով նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ և կողմերի միջև կնքվել է համապատասխան համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: Համապատասխան ֆինանսական միջոցների առկայություն, 23.12.2020թ. կնքված N «ՉՀ-ՄԱԱՊՁԲ-2021/1» գնման պայմանագրի 8.5-րդ և 8.13-րդ կետեր, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետ:

Պատվիրատու՝ **Չարենցավանի համայնքապետարան**